

Գոռ Երանյան

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԹՆՈԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐԸ (XV դ.-XVI դ. կեսեր)

Բանալի բառեր – Հարավային Հայաստան, Էթնոժողովրդագրական պատկեր, հայեր, քրդեր, եզդիներ, թուրքեր, զազաներ, ասորիներ:

Թեև XV դ. - XVI դ. կեսերի Մեծ Հայքի հարավային նահանգների ու հարակից բնակավայրերի առանձին գավառների ու քաղաքների բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ հայտնի չեն, սակայն Էթնիկ կազմի մասին պահպանվել են հատուկեղև վկայություններ:

XVI դ. սկզբում Արևելք այցելած եվրոպացի ճանապարհորդ Ջիովան Մարիա Անջիոլելլոն ուշագրավ տեղեկություններ է հայտնում Միջագետքի քաղաքներից Մարդինի բնակչության Էթնիկ կազմի վերաբերյալ: Ըստ նրա՝ այս քաղաքում բնակվում են շատ ավելի հայ քրիստոնյաներ ու հրեաներ, քան մահմեդականներ¹: Անջիոլելլոյի տվյալներով՝ նույն պատկերն էր նաև Ամիդ-Դիարբեքիրում (Տիգրանակերտ), որտեղ հույները, հայերն ու հրեաներն ավելի շատ էին, քան մահմեդականները²:

Կարծում ենք՝ XV դ. սկզբներից քրդերի ու ղարա ղույունլուների չղադարող պատերազմների հետևանքով Հայաստանի հարավային շրջաններից դեպի Ամիդ գաղթ է եղել՝ սովորացնելով այս շրջաններում հնագույն ժամանակներից բնակություն հաստատած հայության թիվը: Այսպես, Մկրտիչ Նաղաշը, որ դարձավ Ամիդի եպիսկոպոս, այստեղ էր գաղթել Բաղեշի Պոռ գյուղից³: Ենթադրաբար, աղ ղույունլուների առաջնորդներ Ղարա Օսմանի և նրա որդի Համգայի՝ քրիստոնյաների նկատմամբ բարեհաճ վերաբերմունքը⁴ նպաստել է միջազգային առևտրական խաչմերուկներին ավելի մոտ և ավելի ապահով Ամիդում ու նրա շրջակա բնակավայրերում հայերի հաստատվելուն: Չի բացառվում, որ աղ ղույունլուներն Արծկեից ու Արճեշից գերի առնված հայությանը ոչ թե վաճառել են, այլ բնակեցրել իրենց տիրապետության տակ գտնվող Դիարբեքիրում: Արժանահիշատակ է, որ Թովմա Մեծոփեցին Ղարա Օսմանին անվանում է «զտերն Ամթայ Օթման անուն Աղ-ղոյիլու, սիրող յոյժ ազգիս հայոց»⁵:

¹ Տե՛ս Հակոբյան Հ., Աղբյուրներ Հայաստանի յեվ Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ. Ա, ԺԳ-ԺԶ դար (1253-1582), Երևան, 1932, էջ 293 (այսուհետ՝ Ուղեգրություններ, հ. Ա):

² Նույն տեղում, էջ 291: Չարմանակի Է, որ Ջիովան Մարիա Անջիոլելլոն Մարդինում ու Ամիդում չի հայտնում ասորիների գոյության մասին: Եթե Մարդինում հրեաների մասին դեռ կարելի է խոսել, ապա շատ տարակուսելի է հույների գոյությունն Ամիդում: Կարծում ենք՝ Ամիդի պարագայում Անջիոլելլոն չփոթել և ասորիներին հույն է համարել:

³ Տե՛ս Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Խաչիկյան Լ., Երևան, 1955, էջ 622-623 (այսուհետ՝ Ժե դար, Մաս Ա):

⁴ Նույն տեղում, էջ 624:

⁵ Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 118:

Յենց XV դ. առաջին կեսին՝ 1433 թ., Արդևիում կառուցվում է Բարձրահայաց Սուրբ Աստվածածինը, Ամիդում վերանորոգվում սուրբ Թեոդորոս եկեղեցին¹: Հայերի թվի ավելացմանը զուգահեռ՝ կարիք է զգացվում նոր եկեղեցիներ կառուցելու: Թեպետ Սուրբ Կիրակոսի հիմնադրման թիվը մեզ հայտնի չէ, սակայն 1524 թ. այն գործող եկեղեցի էր², իսկ 1551 թ. վերանորոգվել է³: Կարծում ենք՝ XV-XVI դդ. հարավային Նահանգներից շարունակվել է հայերի հոսքը ինչպես Ամիդ, այնպես էլ Մարդին, Մծքին, Ուռհա, Հալեպ և այլ վայրեր: XVI դ. վերջերին Ներսես Մոկացի անունով գրիչն ապրում է Դիարբեքիրում⁴, նույն ժամանակ Մուշի Քարծոր գյուղից Արիստակեսը գրում է, որ Մուշից «եկեալ պանդխտեցա ի մայրաքաղաքն յՈւրհայ»⁵, XVI դ. վերջում Բարսեղ Սասնեցին ապրում է Ուռհայում, և իր թողած հիշատակարանում գրում, որ շատ մարդիկ «փախըստեամբ տարաշխարհիկ լինին»⁶:

Ամիդ են գալիս նաև Հայաստանի այլ վայրերից: Այսպես, XV դ. վերջում կամ XVI դ. սկզբում Կողբից ոմն Խաչատուր իր ընտանիքով տեղափոխվում է այստեղ. «Սա էր յերկրէն Կողբայ, որ եկեալ ընտանեօք իւրովք ի քաղաքն, որ կոչի Ամիթ, և բնակեցաւ անդ»⁷:

Թուրք մի քանի հեղինակներ՝ Բ. Զյուլթուբօղլու, Ֆ. Սյումեր, Ի. Յ. Ուզունչարշըլը, համակարծիք են այն հարցում, որ աղ ղոյունլուներն ու դարա ղոյունլուները «Արևելյան Անատոլիայից» (Հայաստանի հարավային շրջաններ, Միջագետք-Գ. Ե.) թուրքմենական ցեղերին գաղթեցրել են Իրան, ինչի հետևանքով թյուրքական տարրը վերոնշյալ շրջաններում նվազել է⁸: Աղ ղոյունլուների՝ վերոնշյալ վայրերը լքելուն զուգահեռ՝ Ամիդն անընդհատ ներարկվում է հայ գաղթականության նորանոր ալիքով, ուստի պատահական չէ, որ քաղաքաբնակների մեծամասնությունը XVI դ. սկզբին քրիստոնյաներն էին, ինչն էլ արձանագրել է եվրոպացի ճանապարհորդ Ջիովան Մարիա Անջիոլելլոն: Այսպիսով, մեզ հետաքրքրող դարերում Ամիդ-Տիգրանակերտը վեր է ածվում հայաբնակ խոշոր քաղաքի: Անտարակուսելի է, որ քրիստոնյաների գերակշիռ մասը հայերն էին: Պատահական չէ, որ արդեն XVII դ. Էվլիյա Չելեբին քաղաքում բացի հայերից չի հայտնում այլ ռայաների մասին. թեպետ նրանք գոյություն ունեին, սակայն հայերի ստվերում էին⁹:

¹ Տե՛ս ԺԵ դար, Մաս Ա, էջ 627:

² Տե՛ս Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Յ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 360:

³ Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Է., յօրինեց Յ. Սահակ Վրդ. Ծեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 319:

⁴ Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. տասնմեկերորդ, կազմեց Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղեմ, 1991, էջ 292:

⁵ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. երկրորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1967, էջ 50:

⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 2., յօրինեց Յ. Սահակ Վրդ. Ծեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 62:

⁷ Հայոց նոր վկաները, էջ 350:

⁸ Göğebakan G., Doğu Anadolu'nun Osmanlı hakimiyetine girişi, տե՛ս

<https://www.tarihtarih.com/?Syf=26&Syz=381762&Do%C4%9Fu-Anadolunun-Osmanli%C4%B1-Hakimiyetine-Giri%C5%9Fi-/-Yrd.-Do%C3%A7.-Dr.-G%C3%B6knur-G%C3%B6knu%C4%9FFebakan->

⁹ Տե՛ս Օսար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 4, Թուրքական աղբյուրներ, հ. Գ, Էվլիյա Չելեբի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա.Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 186:

Ընդ որում, եվրոպացի ճանապարհորդը հազիվ թե ծանոթ լիներ Ամիդում ու Մարդինում հաստատված «կռապաշտ արևորդիներին», որոնց այս բնակավայրերում հաստատվելու մասին հայտնում է Թովմա Մեծուփեցին¹: Արդեն XVI դ. Դիարբեքիրում բնակվող արևորդիների մասին վկայություններ են պահպանվել հայկական մեկ այլ աղբյուրում²:

XV դ. Դիարբեքիրում ապրում էին ոչ միայն հայեր, այլև, ինչպես նշում է աղբյուրներից մեկը, «Թուրք, Թաթ, Թաթար, Քուրթ, Արապ և Ջհուտ»³:

Արդեն XVII դ. հեղինակ Զյաթիփ Չելեբին Դիարբեքիրի էյալեթում, որն ընդգրկում էր ինչպես Հայաստանի հարավային շրջաններն, այնպես էլ Սինջարը, փաստում է եզդիների գոյության մասին⁴, սակայն չգիտենք Դիարբեքիր քաղաքում նրանք բնակություն հաստատել են, թե՛ ոչ:

Էթնիկ պատկերը փոքր-ինչ այլ էր Դիարբեքիրի գյուղական բնակավայրերում, որտեղ զգալի ներկայություն ունեին թուրքմենական ու քրդական ցեղերը: XVI դ. ամենամեծ աշիրեթային միությունը Դիարբեքիրում գտնվող և քոչվորական կյանք վարող բոզ ցեղային միությունն էր, որն ամռանը փոխադրվում էր Էրզրում ու Երզնկա: Որոշ տվյալների համաձայն՝ այս հսկայական ցեղային միությունը ընդգրկում էր շուրջ 7500 ընտանիք⁵: Ընդ որում, այն կազմված էր թուրքմեններից ու քրդերից⁶:

Ջոզեֆա Բարաբարոն, որ XV դ. վերջին Միջագետքից մուտք է գործել Հայաստանի հարավային գավառները և անցել Սղերդ քաղաքով, ասում է, որ այն խիտ բնակեցված է՝ էթնիկ կազմի մասին չհաղորդելով որևէ տվյալ⁷: Սղերդից շարունակելով իր ճանապարհը դեպի Բիթլիս ու Խիզան՝ նա հայտնում է, որ այդ շրջաններում կան բազմաթիվ գյուղեր՝ նշելով, որ բնակիչները հողագործ են⁸: Երկրագործությանը զբաղվելու մասին ճանապարհորդի վկայությունը տեղի բնակչության հայ լինելու մասին անուղղակի ապացույց է:

Բաղեշի էթնոժողովրդագրական պատկերի մասին շատ վիճահարույց տեղեկություն է տրամադրում եվրոպացի մի անանուն վաճառական, որը XVI դ. սկզբում շրջել է Արևելքում: Նա նշում է, որ Բաղեշի բնակիչները բոլորը քուրդ են, և փութով ավելացնում, որ կան նաև շատ հայ քրիստոնյաներ⁹: Դժվար թե նույն դարում գտնվեր մեկը, որ Բիթլիսի կառավարիչ Շարաֆ Խան Բիթլիսիից ավելի լավ իմանար, թե ովքեր են ապրում իր իշխանանիստ քաղաքում: Քուրդ պատմիչը, որ փորձում է ամեն զնով Բաղեշը Քրդստան համարել, խոստովանում է, որ քաղաքի բնակչության մեծ մասը հայ է¹⁰:

¹ Տե՛ս Թովմա Մեծուփեցի, էջ 66:

² Տե՛ս Հայոց նոր վկաները, էջ 360:

³ ԺԵ դար, Մաս Ա, էջ 623-624:

⁴ Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Կ. Բ., թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններ և հավելվածով, կազմեց Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 1964, էջ 57:

⁵ Տե՛ս Kalman M., Osmanlı - Kürt İlişkileri ve Sömürgecilik, İstanbul, 1994, էջ 77:

⁶ Տե՛ս Martin van Bruinessen, Les Kurdes, États et tribus, Études Kurdes, N° 1, Paris, 2000, էջ 12:

⁷ Տե՛ս Ուղեգրություններ, Կ. Ա, էջ 182:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 298:

¹⁰ Տե՛ս Պարաֆ-Պան Իբն Պամսադին Բիդլիսի, Պարաֆ-Պան, том I, перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой, Москва, 1967, էջ 387 (այսուհետ՝ Պարաֆ-Պան):

Դատելով խիզանում գրված ձեռագրերի բազմաթիվ փոփոխությունից՝ Լևոն Խաչիկյանը իրավացիորեն եզրահանգում է, որ խիզանը XV դ. «բազմամարդ ու հայաշատ» է եղել¹:

Սասունի մասին նշյալ դարերում տեղեկությունները սակավ են, ինչը դժվարություն է հարուցում լեռնագավառի էթնոպատկերի ուրվագծման առումով: XVI դ. կեսերին Յագոյում է եղել պորտուգալացի ճանապարհորդ Մեստեր Աֆոնսոն: Նրա տվյալներով՝ Յագոն բնակեցված էր 500-600 մարդկանցով, որոնց մեծ մասը հայեր ու քրիստոնյաներ էին²: Որպես մահմեդականներ՝ նա հիշում է միայն քրդերին³: Ընդ որում, դատելով եվրոպացի ճանապարհորդի տեղեկություններից՝ հայերն ու քրդերը համեմատաբար էին ապրում⁴:

Ջոզեֆա Բարբարոն, որը եղել է Մուշում, այն անվանում է շատ լավ բնակեցված բաղաբ ⁵: Շարաֆ Խան Բիթլիսին հետաքրքրաշարժ տվյալներ է հաղորդում Մշո դաշտի հայկական գյուղերի մասին, որոնք խիստ հավաստի են թվում՝ դատելով այն բանից, որ Մշո դաշտը ռոմիկների տիրույթների թվում էր: Ըստ բուրդ պատմիչի՝ Մուշի հարթավայրային մասերում մեկը մյուսի ետևից տեղավորված են հայկական գյուղեր՝ բաղաբացած շուրջ 100 ընտանիքից⁶: Դատելով բուրդ մատենագրի տեղեկություններից՝ Մշո դաշտն այնքան հայառեց էր, որ այստեղ մահմեդական տարրը գրեթե նշանակություն չի ունեցել:

XVI դ. առաջին տարիներին Տարոնի երկրում՝ Մուշում, թյուրքական ու քրդական ցեղերի գոյության մասին է վկայում նաև Բարսեղ Արծիշեցին. «զօրքն Զրդաց և Թուրքաց, որ բնակեալ էին ի յերկիրն Տարոնոյ դաշտին»⁷: Քննվող դարերում հայկական սկզբնաղբյուրները թուրք կոչում են հիմնականում թուրքմենական դարա դոյուն-լու ու աղ դոյուն-լու ցեղերին: Օսմանյան թուրքերը դեռ չէին գրավել այս տարածաշրջանը, ուստի հակված ենք կարծելու, որ խոսքը այս բնակավայրերում հաստատված դարա դոյուն-լուների մասին է: Մուշում ու շրջակայքում XV դ. ապրում էին նաև զազաներ՝ դըմլիներ. «Ազգ մի խուժադուժ լեզուաւ և ազգաւ, ոչ կոչի Դըմլի՝ որք տեղի առեալ բնակէին ի նոյն գաւառն Տարօնոյ. առ ստորոտս լերին Տորոսի ի մերձակայ գեօղսն», - կարդում ենք ժամանակի հիշատակարաններից մեկում⁸:

¹ Խաչիկյան Լ., Աշխատություններ, հ. Գ, Երևան, 2008, էջ 309:

² St' u Gulbenkian R. et Berberian H., La légende de David de Sassoun d'après deux voyageurs portugais du XVI^e siècle, Revue des études Arméniennes, Paris, 1971, tome VIII, էջ 177:

³ Նույն տեղում, էջ 177-178:

⁴ Նույն տեղում, էջ 180:

⁵ Տե՛ս Ուղեգրություններ, հ. Ա, էջ 196-197:

⁶ Տե՛ս Արաբ-Մահ, էջ 400:

⁷ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, կազմեց Զակարյան Վ., Երևան, 1951, էջ 128:

⁸ Ետադր Զայոց, Զավաթեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Դեռնոյ վարդապետի Փիրղալեւեան Տոսքեցոյ, Կ. Պօլիս, 1888, էջ 211: Հիշատակարանում պահպանված հետևյալ բնորոշումը «ազգ մի խուժադուժ լեզուաւ և ազգաւ, ոչ կոչի Դըմլի», կասկած չի թողնում, որ խոսքը զազաների (դըմլիկների) մասին է, որոնք ինքնանվանումը դըմլի է (այս մասին տե՛ս Асатрян Г., Еще раз о месте заза в системе иранских языков (Заметки по новоиранской диалектологии) ՊԲՀ, 1990, № 4, էջ 154-163): Հետաքրքիր է, որ դըմլիկներին հարևան ժողովուրդները կոչել են զազա նրանց լեզվի հնչյունական համակարգի առանձնահատկությունների պատճառով (տե՛ս Asatrian G., DIMLI, Encyclopædia Iranica, vol. VI, էջ 405-411, <http://www.iranicaonline.org/articles/dimli>): Հայ հիշատակագիրն էլ կարծես հենց դա է նկատի ունեցել՝ գրելով «ազգ մի խուժադուժ լեզուաւ և ազգաւ»: Այսօր էլ զազաների կարելի է հանդիպել Մշո Սուրբ Կարապետի շրջակայքում:

Ամենայն հավանականությամբ XV դ. և XVI դ. սկզբներին զագաներ կային նաև Դիարբեքի տարածքում, ինչպես նաև Ջերմիկում (Ջերմուկ) ու Բալուում¹: Նրանք այս վայրերից աստիճանաբար շարժվում են Դերսիմ:

XV դ. սկսած մարդաշատ բնակավայր է դառնում Աղթամար կղզին: Այն, որ Աղթամարը սոսկ գրչության կենտրոն չէր, երևում է Ջիովան Մարիա Անջիոլետլոյի վկայությունից, ըստ որի կղզում XV դ. երկրորդ կեսին բնակվում էր «ավելի քան 600 տուն հայ քրիստոնյա»²: Տեղին է նշել, որ ըստ սկզբնաղբյուրների՝ տարատեսակ արշավանքներից ու ասպատակություններից խույս տալու նպատակով հայ մարդիկ հաստատվում էին Աղթամար կղզում: Ուստի պատահական չէ, որ հիշատակագիրներից մեկը կղզին կոչում է «զանմատչելիս և զանկոխս ոտից թշնամեաց և զտեղիս ապաստանի բոլոր աշխարհացս»³: Կղզին անվանում էին աստվածապահ⁴, ամուր⁵, անառիկ⁶: Հիշատակարանները վկայում են, որ այս տեղաշարժի ընթացքում գրանցվում էին նաև մահվան դեպքեր: Ուստի նույնիսկ ընտանիքի անդամների թվաքանակը 4-5-ով հաշվելու դեպքում աներկբայելի է, որ Աղթամարում ապրում էր առնվազն 2400-3000 հայ: Կարծես տարակույսները փարատելու համար են XVI դ. սկզբում գրված եվրոպացի անանուն վաճառականի հուշերը. «Կա մի փոքրիկ քաղաք երկու մղոն շրջագծով, քաղաքը ունի այնքան տարածություն, որքան կղզին: Այդ քաղաքը կոչվում է Արմինիկ (Arminig), շատ բազմամարդ է և միայն հայ քրիստոնյաներն են բնակվում այնտեղ, առանց ոչ մի մահմեդականի, ունի շատ եկեղեցիներ, բոլորը հայ քրիստոնյաների պաշտամունքի համար»⁷:

Ուղեգիրը հաջորդիվ գրում է. «Քաղաքի կամ կղզու դիմաց գտնվում է մի ծովածոց, հիանալի մի դաշտով, որ ունի բազմաթիվ գյուղեր՝ բնակված հայ քրիստոնյաներով, կան շատ մշակված հողեր ու գեղեցիկ պարտեզներ՝ ծառերով, որոնք արտադրում են ամեն տեսակ պտուղ»⁸:

Աղթամարում են հաստատվում Վանա լճի հարավային ափերի հայկական բնակավայրերից, իսկ ահա Վանա լճի հյուսիսային եզերքի հայկական շեների համար ապաստարան էր ծառայում Լիմ կղզին: Երբ դարա դոյունությունների առաջնորդ Իսբանդարի զորքերն ասպատակում են Քաջբերունիքը, այնտեղից Լիմ փոխադրված Թովմա Մեծոփեցին գրում է, որ Լիմում չկա նստելու և վեր կենալու տեղ⁹:

Վանա լճի ավազանի հայկական բնակավայրի էթնիկ պատկերի մասին տվյալների համար դարձյալ պարտական ենք եվրոպացի ճանապարհորդներին ու բանագնացներին: Նրանցից Ջոզեֆա Բարբարոն Խլաթի մասին ասում է, որ քաղաքն ունի շուրջ 1000 տուն¹⁰, ենթադրաբար այդ ժամանակ քաղաքն ուներ 7000-8000 ոչ պակաս բնակչություն:

¹ St' u Minorsky V., A "Soyürghāl" of Qasim b. Jahāngir Aq-qoyunlu (903/1498), Bulletin of the School of Oriental Studies, University of London, 1939, Vol. 9, №. 4, էջ 938:

² Ուղեգրություններ, հ. Ա, էջ 271:

³ ԺԵ դար, Մաս Ա, էջ 374:

⁴ Նույն տեղում, էջ 505:

⁵ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց Խաչիկյան Լ., Երևան, 1967, էջ 276:

⁶ Նույն տեղում, էջ 277:

⁷ Ուղեգրություններ, հ. Ա, էջ 300:

⁸ Նույն տեղում, էջ 301:

⁹ Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 147-148:

¹⁰ Տե՛ս Ուղեգրություններ, հ. Ա, էջ 197:

XV դ. անդադար պատերազմները իր վրա մեծ չափով կրում էր Վանա լճի հարավային ափին գտնվող Ոստանը, ուստի պատահական չէ, որ XV դ. երկրորդ կեսին Ոստան այցելած Բարբարոն այն տեսնում է որպես քայքայված, ոչ խիտ բնակեցված ու ընդամենը 300 տուն ունեցող մի բնակավայր¹: Հնարավոր է այս առումով խաբուսիկ ցուցիչ չէ նաև այն, որ XV դ. սկզբին Ոստանից մեզ հասած ձեռագրերը թվապես գերազանցում են դարավերջում գրվածներին: Այսպիսով, Ոստանը դարավերջին մի քանի հազար բնակչություն ունեցող քաղաք էր: Մեզ արդեն քաջածանոթ անանուն վաճառականը XVI դ. սկզբին Ոստանն ավան է համարում: Առավել հետաքրքրական է նրա մեկ այլ տեղեկությունն առ այն, որ Ոստանի բոլոր գյուղերը բնակեցված են քրդերով²:

Նույն ուղեգրի հաղորդմամբ՝ Ոստանի, Վանի, Դատվանի, Արծկեի, Արճեշի, Խլաթի, Բերկրիի ամրոցները (ըստ երևույթին պետք է հասկանալ քաղաքները- Գ. Ե.) բնակեցված են հայերով և քրդերով³: Ավելի արտահայտիչ է նրա մեկ այլ նախադասությունը. նկարագրելով Վանա լճի շրջակա բնակավայրերը՝ նա ասում է. «Շրջապատի երկիրը բարեբեր է, լի գյուղերով և գյուղացիները մեծագույն թվով հայեր են»⁴: Վերը նշված յոթ քաղաքներից ուղեգիրն անդրադառնում է միայն Վանի եթևիկ պատկերին՝ այն անվանելով մեծ քաղաք, որի բնակչության մեծ մասը հայեր են: Իսկ ահա Վանի բերդում, ըստ նրա՝ բոլորը քուրդ են⁵: Ուշադրությունից չի կարող վրիպել, որ թե՛ օտար հեղինակները, թե՛ հայ հիշատակագիրները քաղաքատիպ վայրերում քրդերին հիշատակում են միմիայն բերդի տարածքում: Բարսեղ Արճեշցին Արծկեի քուրդ բնակչության մասին գրում է. «Ազգն Մարաց, որ նստեալ էին ի բերդն»⁶: Աղբյուրների համադրությունից պարզ է դառնում, որ քաղաքային վայրերում քրդերը կամ ներկայություն չեն ունեցել կամ չնչին են եղել:

Աղբյուրները համերաշխորեն լռում են Վանա լճի հարավային ափերին թուրքական ցեղերի գոյության մասին: Եվրոպացի ճանապարհորդները, զարմանալիորեն, նրանց չեն հիշատակում նաև Վանա լճի հյուսիսային ափերին, ինչը ծանրակշիռ փաստարկ է այդ երկրամասերում նրանց թվաքանակի նվազման: Արդեն նշել ենք, որ Արճեշի վրա Սեֆյանների հարձակումները ստիպում են դարա դոյունլուներին հեռանալ այդ վայրերից, իսկ ահա նախորդող ու հաջորդող ժամանակաշրջանում աստիճանաբար նրանք այնքան են նվազել, որ XVI դ. սկզբում զգալի քանակ չեն ունեցել: Թուրք հետազոտող Գ. Գյոդեբաքանը գրում է, թե միմյանց մրցակից աղ դոյունլուների ու դարա դոյունլուների պետությունները կարևոր դեր խաղացին Արևելյան Անատոլիայի (Միջագետք, Հայաստան-Գ. Ե.) թյուրքացման գործում⁷: Հարկ է նկատել սակայն, որ կոնկրետ Հայաստանի հարավային սահանգներում թյուրքական ցեղերն այդքան էլ մեծ հետք չթողեցին. աղ դոյունլուները հիմնականում պահպանվեցին Դիարբեքիի հարակից վայրերում, իսկ դարա դոյունլուները, որոնք հիմնականում հաստատվել

¹ Նույն տեղում, էջ 184:

² Նույն տեղում, էջ 301:

³ Նույն տեղում, էջ 300:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 302:

⁶ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 127:

⁷ St'ü Göğebakan G., նշվ. աշխ., տե՛ս <https://www.tarihtarih.com/?Syf=26&Syz=381762&Do%C4%9Fu-Anadolunun-Osmani%C4%B1-Hakimiyetine-Giri%C5%9Fi-/-Yrd.-Do%C3%A7.-Dr.-G%C3%B6knur-G%C3%B6%C4%9Febakan-> :

Էին Վանա լճի հյուսիսային ափերին, հետագայում այդ վայրերից հեռանում են: Նույնիսկ տպավորություն է ստեղծվում, որ աղ ղոյունկունների ու դարա ղոյունկունների ժամանակ, ինչպես նաև նախորդ ժամանակափուլերում հատկապես Վանա լճի հարավային շրջանում հաստատված ոչ մեծաքանակ թյուրքական տարրը բացի Հայաստանի այլ վայրեր հեռանալուց աստիճանաբար ձուլվել է քրդերին: Ի տարբերություն հայ հեղինակների, որոնք երբեմն նշում են «տաճիկ» ու «մահմեդական» եզրերը ու որոշակի չեն հիշատակում էթնիկ պատկանելությունը (նշելու դեպքում էլ հիշում են միայն քրդերին), ապա եվրոպացի հեղինակները միտված են առանձնացնել ազգությունը, սակայն նրանք էլ վերը նշյալ շրջաններում թյուրքական տարրի մասին որևէ տեղեկություն չեն հայտնում:

Այնուհանդերձ, Վանա լճի հյուսիսային ափի հավանաբար գյուղական բնակավայրերում կարող ենք նշել թուրքախոս տարրի գոյությունը: 1566 թ. մի հիշատակարանում, որում նկարագրվում է Արճեշ քաղաքի պարսպի կառուցումը, ասվում է, որ շինարարական աշխատանքների համար Վանի Հունսեյին փաշան Վանա լճի շրջակայքի շատ քաղաքներից, գյուղերից և բնակավայրերից տարբեր ազգությունների բազում մարդիկ է հավաքել, որոնց թվում՝ «հայ, քիւրդ, տաճիկ ու ասորի»¹: Քրդերի պարագայում ամեն ինչ հասկանալի է, իսկ տաճիկ անվան տակ կարծում ենք հիշատակագիրը նկատի է ունեցել թուրքախոս տարրին, որն, ըստ երևույթին, բնակվում էր լճի հյուսիսային ափերին և չէր ընկալվում մեկ էթնիկ հավաքականություն: Օսմանյան թուրքերին հայ հիշատակագիրները նշյալ դարերում հիմնականում կոչում են օսմանկուն², ազգն հ(ո)ռոմոց³, տաճիկ⁴, իսմայելացի⁵, երբեմն էլ՝ նետողաց⁶: Մեզ հետաքրքրող դարաշրջանում թուրքախոս տարրի ներկայությունը նշմարելի չէ ինչպես Վանա լճի հարավակողմում, այնպես էլ Բաղեշում, Սասունում, Սղերդում, Մոկբում և այլ վայրերում: Թյուրքական ոչ բազմաքանակ տարրի հանդիպում ենք միայն, ինչպես նշեցինք, Վանա լճի հյուսիսային կողմում, Տուրուբերանում՝ Մուշի շրջակայքում,

¹ Տե՛ս Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Գ^մ 6332, էջ 281:

² Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի, հ. առաջին, կազմեց Արտաւազդ արքեպիսկոպոս Սիրումեան, Վենետիկ, 1948, էջ 361: Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Գ^մ 6332, էջ 291: Հանդիպում ենք նաև «Աւսման ազգն» ձևակերպմանը (տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ., յօրինեցին Յ. Բարսեղ Սարգսեան և Յ. Գրիգոր Սարգսեան, Վենետիկ, 1966, էջ 389):

³ XVI դ. հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Ի բռնակալութեան ազգին Հռոմոց սուլթան Մուրադին» (տե՛ս Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Գ^մ 6332, էջ 320: Հանդիպում է նաև հետևյալ տարբերակը. «Ի թագաւորութեան Հռոմայեցոց», տե՛ս նույն տեղում, էջ 245): Մեկ այլ դեպքում. «Պատերազմեցան ընդ միմեանս ազգն Հռոմոց եւ Կարմիր գլխաց» (տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. տասնմեկերորդ, էջ 413: Մեկ այլ հիշատակարանում կարդում ենք. «Շարժեաց զօրս հռոմանց զազգն մահմետական» (տե՛ս Православный Палестинский сборник, выпуск 104 (41), Юзбашян К., Армянские рукописи в петербургских собраниях, Санкт-Петербург, 2005, էջ 255):

⁴ Տե՛ս Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Գ^մ 6332 էջ 302: Հանդիպում է նաև հետևյալ ձևակերպումը. «Ի թագաւորութեան տաճկաց մահմետական ազգին» (տե՛ս նույն տեղում, էջ 303), «Ի թագաւորութեան տաճկաց ի Բիւզանտիայ» (տե՛ս նույն տեղում, էջ 308):

⁵ Հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Ինքնակալ մեծ թագաւորին իսմայելացոց սուլթան Մուրադ» (տե՛ս նույն տեղում, էջ 325): Դեռ XV դ. մի հիշատակարանում հանդիպում ենք հետևյալ ձևակերպմանը. «Ի ժամանակին թագաւորութեան Իսմայելացոց ազգին սարակինոսաց ի յազգէն Հազարու, որ նուազեալ էր թագաւորութիւնն Յունաց, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս» (տե՛ս Ցուցակ հայերեն ձեռագրաց Չմամռի վանքի մատենադարանին, կազմեց Մետրոպ վրդ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 580):

⁶ Տե՛ս Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Գ^մ 6332, էջ 300:

Դիարքեֆիրում ու հարակից տարածքներում: Յետագայում հիմնականում օսմանյան վարչական ապարատի ձևավորումը հանգեցնում է թյուրքական տարրի աճի, հատկապես քաղաքային բնակավայրերում, ինչը երկրի էթնոժողովրդագրական պատկերի վրա լուրջ ազդեցություն ունենալ չէր կարող:

Իսկ ահա Յայաստանի հարավում հաստատված մեկ այլ էթնիկ տարրի՝ ասորիների բնակության վայրը ինչպես այդ ժամանակ, այնպես էլ հետագայում Վանա լճի հարավակողմն էր: Ասորիներն դեռևս XV դ. վերջում Յայկական լեռնաշխարհի հարավային ծայրամասերում՝ Յաքեֆարի շրջակայքում, իրենցից զգալի ուժ էին ներկայացնում¹:

Ղարա Յուսուֆի ժամանակ Յայաստանում տարածքներ է ստանում մահմուդիների ցեղը: Ըստ բուրդ պատմիչ Շարաֆ Խանի՝ Ղարա Յուսուֆը Շեյխ Մահմուդին է տվել Աշուտ բերդն (Աշուտաբերդ) ու Խոշաբը²: Վերջիններս, որոնք ըստ երևույթին եկել էին Բոհոտանից (Չեզիրե)³, աղ դոյունլուների ժամանակ իշխանություն են հաստատում նաև Աղբակում⁴: Յետագայում մահմուդիների տիրույթները ձգվում էին Մակուից մինչև Վանա լիճ⁵: XV դ. վերջում Ուզուն Յասանի կառավարման ժամանակ աղ դոյունլուները գրավում են Յաքեֆարին, վերցնում իշխանությունը շամբո ցեղից ու հանձնում դմբուլիներին⁶, որոնց բնակության հիմնական վայրերը Խոյն ու Սալմաստն էին⁷: Այս ցեղին է տրվում Յաքեֆարի մի մասը⁸:

Մահմուդիները ու դմբուլիները եզդիական ցեղեր էին: Շարաֆ Խանը, որի ատելությունն եզդիների նկատմամբ անթաքույց էր, դմբուլիների մասին գրում է, որ նրանք հավատացել են եզդիական անարգ կրոնին, սակայն աշիրեթի մի մասը հետագայում հրաժարվել է այդ հերետիկոսությունից, մի մասը՝ ոչ⁹: Դմբուլիներին ևս Շարաֆ Խանը համարում է Շեյխ Ադիի հետևորդներ, այսինքն՝ եզդիներ¹⁰: Եզդիական ցեղեր էին հաստատվել նաև Կորճայքի Արարադ (Ջուղի դաղ) լեռան շրջակայքում¹¹: Չի բացառվում, որ նեղվելով մահմեդականների ճնշումներից՝ եզդիների մի մասը, որոնց ավելի հարազատ էր քրիստոնեական միջավայրը, քան մահմեդականը, ինչպես այդ շրջաններից, այնպես Միջագետքից շարժվել են դեպի հայաշատ բնակավայրեր:

Այսպիսով, եկամուտ ժողովուրդները դեռ շատ չէին փոխել Յայաստանի էթնիկ պատկերը: Յայաստանի հարավային նահանգների էթնիկ կազմի մասին պահպանված հատուկեցու վկայություններն աներկբայորեն ցույց են տալիս, որ չկար քիչ թե շատ խոշոր մի բնակավայր, որտեղ մեծամասնություն կազմեին այլէթնիկ տարրերը: Անտարակուսելի է, որ չնայած Յայաստանի ազգաբնակչության կազմի մեջ տեղի

¹ Նույն տեղում:

² Տե՛ս Վարաֆ-Խան, с. 349:

³ Տե՛ս Բաղայան Գ., Վանի էյալեթի քրդական իշխանությունները (հոբջումերները) XVI դ. – XIX դ. 40-ական թթ., «Իրան-Նամե», թիվ 2-3, Երևան, 1998, էջ 26:

⁴ Տե՛ս Վարաֆ-Խան, с. 349:

⁵ Տե՛ս Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв., Л., 1949, с. 129:

⁶ Տե՛ս Վարաֆ-Խան, с. 357:

⁷ Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 129:

⁸ Տե՛ս Վարաֆ-Խան, с. 357:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, էջ 83:

¹¹ Նույն տեղում, էջ 177:

ունեցած լուրջ փոփոխություններին՝ հայությունը շարունակում էր մնալ հարավային նահանգների բնակչության մեծագույն մասը:

Гор Еранян, Этнодемографическая картина Южной Армении XV до середины XVI века, - В XV до середины XVI века в Южных регионах Армении кроме армян так же жили заза, езиды, ассирийцы, турки и курды. Присутствие последних было значительным по сравнению с другими не этническими элементами. Следует отметить, что политическая значимость курдов была гораздо более выразительная, чем ареал их места жительства. Несмотря на значительные этнодемографические изменения в Армении, армяне продолжали оставаться большинством населения страны.

Gor Yeranian, The Ethno-Demographic Image of Southern Armenia in the XV Century to mid XVI, - In the XV-XVI centuries, alongside with Armenians there were Zazas, Yazidis, Assyrians, Turks and Kurds living in the southern regions of Armenia. The latter's presence was the most significant among foreign tribes. It is worth mentioning that the political value of the Kurds living in the southern Armenian regions was much higher and remarkable than the area that they populated. Despite the serious shifts in the demographic image of Armenia, the Armenians continued being the majority in the state.

Գոր Երանյան – ԶԶ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող:

